Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի պետ Արթուր Ալեքսանյանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ը գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Արթուր Ալեքսանյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2024 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ը ներառյալ.

3. Հրավիրող կողմը՝

ՌԴ ֆինանսների նախարարություն, ք. Մոսկվայի կառավարություն

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Մոսկովյան 8-րդ ֆինանսական համաժողովին

5. Քննարկված թեմաները՝

ՌԴ կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչները ներկայացրել են բյուջեի թվայնացման գործընթացը ՌԴ-ում՝ որպես պետական կառավարման կատարելագործման առանցքային խթանիչներից մեկը: Կարևորվել են դրված նպատակներին և թիրախներին հասնելու ջանքերը, քննարկվել են կիրառվող մեթոդների և գործիքների արդյունավետությունը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել դեռևս 2011թ. ներդրված «էլեկտրոնային բյուջե» հայեցակարգին, որը ՌԴ հանրային ֆինանսների ոլորտում թվային փոխակերպման մեկնարկն է հանդիսացել:

Միաժամանակ նշվել է, որ հանրային ֆինանսների թվայնացման շնորհիվ բյուջեի կատարման արդյունավետությունն ու որակը այժմ տեղափոխվել են այլ հարթություն:

Առանձնահատուկ կերպով նշվել է, որ ներկայումս մշակվում է բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման նոր հայեցակարգ, որը կսահմանի հանրային ֆինանսների ոլորտի զարգացման ուղղությունները մինչև 2030 թվականը:

ՌԴ ֆինանսների նախարարության, կենտրոնական բանկի, ՊԵԿ-ի և «Խնայբանկի» պաշտոնատար անձինք մանրամասն ներկայացրել են բյուջեի թվայնացման ուղղություններով իրականացված և ընթացիկ աշխատանքները:

Հայկական կողմը նույնպես ներկայացրել է ՀՀ-ում բյուջետային առաջնահերթությունների հետ կապված հիմնահարցերը, թվայնացման գործընթացի իրականացմանն ուղղված քայլերը, հանդես է եկել արդյունավետության բարձրացման մի շարք առաջարկներով:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի հետ նշված ոլորտում՝ փոխադարձ տեղեկացնելով իրականացվող քայլերի մասին, և շարունակել փոխհամաձայնեցված ծրագրերի իրականացումը ոլորտային առանձին մասնագետների հետ:

Ստորագրությունը՝

23.10.2024 թ.